

ՀՈՒՋԱԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հուզագնահատողական արտահայտությունները ինքնաբերական խոսքի փաստեր են, որոնք կրում են հուզականության և գնահատողական վերաբերմունքի տարբեր բաղադրաչափեր: Դրանց կարգային անհամասեռությունը հանգեցրել է լեզվաբանության պատմության մեջ այս արտահայտությունների դասակարգման խնդրին, դրանք դիտելով որպես մարդու հոգեկանի՝ զգացմունքների, կամքի և մտքի խոսքային երևույթներ:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ միջարկություն, ձայնարկություն, եղանակավորողներ, հուզագնահատողական արտահայտություններ, խոսույթային, լեզվառձական, բաղադրիչ, չափազանցություններ, փոխաբերություններ:

Ճանաչողական հոգեբանության և հաղորդակցման տեսության շրջանակներում գնահատումը բացատրվում է որպես շրջապատող աշխարհից ստացվող տեղեկատվության ընտրության մեխանիզմ: Շրջապատող միջավայրից ինֆորմացիայի ընկալումը մարդու կողմից կատարվում է ընտրովի: Որոշ երևույթների ընկալմանը հաջորդում է հուզական վերաբերմունքի անմիջական արտահայտությունը: Լեզվում ի հայտ են գալիս հուզական ընկալումներն արտահայտող միավորներ, որոնք կարող են լինել բնաձայնական բացականչություններ, բառեր կամ այդ երկուսի միասնությունը: Բնականաբար, մարդը

դրանք գնահատում և կարգավորում է իրեն հարմար ձևով, դրանցից որոշները տարածում են ստանում և ձեռք են բերում կայուն կիրառություն:

Դարեր շարունակ այս լեզվախոսքային միավորները քերականների դասակարգումներում տարբեր տեղ և անուններ են ունեցել. լեզվաբանները դրանք անվանել են մեկ՝ միջարկություն, մեկ՝ ձայնարկություն, մեկ՝ եղանակավորողներ: Քանի որ հայկական քերականության մեջ այս արտահայտությունները դիտարկվում են ոչ որպես խոսքի միավորներ, այլ որպես առանձին բառային միավորներ, մենք այստեղ դրանք կանվանենք հուզագնահատողական արտահայտություններ (այսուհետ՝ ՀԳԱ)՝ կարևորելով դրանց իմաստային և կառուցվածքային անհամասեռությունը մի կողմից, և գործառական ամբողջականությունը՝ մյուս:

Իրենց միտքը և վերաբերմունքը արտահայտելու միջանկյալ գործառույթի շնորհիվ ՀԳԱ մարդու լեզվական և ոչ լեզվական նշանային գործունեության դաշտում սահմանային տեղ են զբաղեցնում: Դ. Քրիսթալը¹ ևս դրանց գոյությունը խոսքում բացատրում է հուզական կամ կամային վիճակն արտահայտելու անհրաժեշտությամբ: Դրանք միշտ խոսքում հանդես են գալիս որպես շարույթային ամբողջականություն, գրավոր խոսքում անջատվում են ստորակետով:

¹ Crystal D. Phonaesthetically speaking. English Today 42, 1995, pp. 8–12.

Գ. Զահուկյանը¹ իր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գրքում դիտարկում է եղանակավորության կարգն ամբողջությամբ, հուզականից դեպի գնահատողական-ինացականը գնացող իր աստիճանակարգությամբ: Սկսելով նախաբառային առոգանությունից, որը կազմված է հնչերանգի և շեշտի գույակցումից, Զահուկյանը կարևորում է դրանց ինչպես հաղորդակցական, այնպես էլ ճանաչողական կողմը: Ըստ նրա՝ բացականչությունն արտահայտում է զգացմունք, իսկ հարցական հնչերանգում կան կամային-ինացական բաղադրիչներ՝ արտահայտված կոչական արտահայտություններում և ուշադրություն հրավիրող կառույցներում: Բառային մակարդակում Զահուկյանը դիտում է եղանականիշ բառերն ու բառախմբերը չորս հիմնական կարգերում, որոնցում, սակայն, հստակորեն չի երևում հույզից դեպի գնահատական կարգայնացման աստիճանականությունը: Այդուհանդերձ, իմաստային առումով ընդգծված հաղորդակցական արժեք ունեն կոչական և հարցուպատասխանական բառերն ու բառախմբերը, որոնց վերաբերական կարգը գնահատողական բնույթի է:

Հուզագնահատողական արտահայտությունների կարգային-հասկացական սահմանները ուրվագծելը հնարավորություն է տալիս դրանք համարելու հոգեկանի լեզվական կարգայնացման առանձին միջոց: Անցնելով լեզվական ճանաչողության տարրական փուլից դեպի բարդը՝ ՀԳԱ միևնույն հարացուցում ներառում են բնաձայնական ձայնարկությունից մինչև խոսույթակազմիչ ցուցիչներ՝ եղանակավորող բառերն ու միջանկյալ արտահայտությունները:

ՀԳԱ բովանդակության պլանում

ունեն ինչպես վերաբերական, այնպես էլ արտաբերական իմաստներ և ուղղված են ինչպես արտաքին աշխարհի երևույթների արտացոլմանը, ինչպես բառերի մեծ մասը, այնպես էլ ուղղված են զգացմունքի, մտքի և կամքի արտաբերմանը: Դրանք մի կողմից՝ նշանակում են, մյուս կողմից՝ արտահայտում են և երրորդ կողմից՝ ցույց են տալիս իրենց բովանդակության պլանը: Ի տարբերություն լիիմաստ բառերով կազմված արտահայտությունների, որոնք նշանակում են մի բան, իսկ ներկա կերպով արտահայտում են մեկ ուրիշը, օրինակ՝ «դուռ» կամ «ձեռքը» և զգուշացում՝ արտահայտելու համար կամ պետք է լրացուցիչ արտահայտություններով բացատրել կամ օգտվել արտալեզվական միջոցներից: Համատեքստով պայմանավորվածությունը, իր հերթին, ենթադրում է այն միտքը, որ հարցի գործաբանական կողմը միջլեզվամշակութային գործաբանության սահմաններում կարող է ծավալուն հետազոտության առարկա լինել:

Տրամաբանորեն տարրալուծելով մեզանում հաճախ հնչող *յոռ լավ-է~, այքեզ բա~ն, հլա մի քե~ս, լա~վ էլի, Օյ, զգո՛ւյշ, մակարդա՛կ, քաշշի՛ի, առը~հա՛* կամ անգլերենից հայտնի *Oh, my God!, Wow! Gee! Woops!, Hurray! Dear me! Ouch! Bah! Ooh-la-la!* արտահայտությունների իմաստային բաղադրիչները՝ տեսնում ենք, որ դրանք հիմնականում երկուսն են՝ հույզի զգացական արտահայտություն և գնահատողական վերաբերմունք: Երկու բաղադրիչներն էլ հաղորդակցական արժեք ունեն այնքանով, որ դիմացինի ուշադրությունն են հրավիրում խոսողի այս կամ այն վիճակի և վերաբերմունքի վրա, իսկ երբեմն էլ պարզապես ուշադրություն են հրավիրում: Մյուս վարկածն այն է, որ հույզի և գնահատման տարրերը մեր գիտակցության մեջ լեզվական նշաններով ամրակայվում են այնքանով, որքանով կարևորված են և կիրառե-

¹ Գ. Զահուկյան, «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները», Երևան, ՀՍՀՀ ԳԱ հրատ. 1974, էջ 357:

լի են մեր գործունեության մեջ: Որքան շատ են որոշակի իմաստ արտահայտող ՀԳԱ-ները, այնքան առավել «ծանոթ» և կարգայնացված է մեր լեզվական գիտակցության մեջ տվյալ հոգեկան իրողությունը: Դիտարկենք այս վարկածը գնահատման իրողության վրա:

Վերաբերմունքի ձևավորման շնորհիվ հնարավոր է դառնում ենթադրություններ և կանխատեսումներ անել, կապ ստեղծել և հաստատել մարդկանց և շրջապատող աշխարհի մասին եղած գիտելիքների միջև, ընդհանրացնել դրանք ըստ որոշակի գնահատականների: Այսպես են զարգանում լեզվական մտածողությունը, մտակաղապարներն ու կարծրատիպերը: *Լեզվում ընկալման հուզականությունն արտահայտող միավորներին լրացնելու են գալիս գնահատողական վերաբերմունք արտահայտող միավորները:*

Գնահատումն ու դասակարգումը շրջապատող աշխարհի ընկալման համար անհրաժեշտ գործառնություններ են: Իրերը հստակություն են ձեռք բերում միայն այն դեպքում, եթե հաստատված է դրանց հստակ տարբերությունը այլ իրերից:

Այս կերպ ամեն մի ազգի մոտ ձևավորվում է իրեն յուրահատուկ մոտեցում բնության, մարդկային մտքերի, առարկաների հանդեպ: Այս հարաբերությունների հիման վրա ձևավորվում է տվյալ ազգի և մշակույթի արժեքային համակարգը: Աշխարհի հանդեպ վերաբերմունքից ձևավորվում են արժեքային նորմեր, որոնք իրենց հերթին որոշում են վարքագծային կաղապարներ, և ձևավորվում է տվյալ ազգի ներկայացուցիչների վարքագիծը: Գնահատման հիման վրա է ձևավորվում խոսքի նորմավորման կարգը: *Արժեքային վերաբերմունքը ևս լեզվում ունի իր արտահայտման ձևերը:*

Լեզվի և խոսքի միջոցով հաղորդվող սուբյեկտիվ տեղեկատվության տեսակները հնարավոր է տարբերակել *հաղորդակցման հարթության վրա*: Հաճախ

տեղեկությունն ինքը կառուցվածքով և որակապես փոփոխվում է սուբյեկտիվ ուղերձի ազդեցությամբ: Այս գործոնն էլ ստիպում է ՀԳԱ տարբերակումն իրականացնելու ըստ հաղորդակցության դասական կաղապարի, որում կարևորվում են հաղորդող կողմը, հաղորդման նյութը և հաղորդակիցը: Ըստ այդմ՝ հաղորդակցման տեսության լույսի մեջ ՀԳԱ բնութագրման հարցն ունի երեք կողմ. *ինչ են արտահայտում, ինչ են ցույց տալիս և ինչ են հաղորդում* դրանք:

Հուզագնահատողական արտահայտություններն, այսպիսով, ճանաչողական-հաղորդակցական կաղապարի շրջանակներում կարելի է դասակարգել՝ ելակետ ունենալով հաղորդող կողմի հուզականության *գիտակցման* և խոսույթային ժամանակատարածքում *ինքնագիտակցման աստիճանը*.

- նրա *գնահատականը* հաղորդակցման *իրադրության կամ նյութի վերաբերյալ*,
- նրա վերաբերմունքը *հաղորդակցի* նկատմամբ:

Ճանաչողական և հաղորդակցական տիրույթներում մեր ձևավորած այս աստիճանականությունը առանց մեծ դժվարության կարելի է դիտարկել ՀԳԱ իմաստային և կառուցվածքային և հատկապես գործաբանական հատկանիշների դրսևորումներում: Որքան ավելի ինքնաբուխ և հուզական է արտահայտությունը, այնքան կառուցվածքային առումով ավելի պարզ է նրա լեզվական դրսևորումը: Գիտակցվածությունը լեզվական ձևերում ևս արտացոլվում է բաղադրյալ կազմությամբ: Իմաստային առումով վերաբերմունքի գիտակցման աստիճանը երևում է գնահատողական բաղադրիչի գերակշռությամբ: Ի վերջո, գործաբանական նշանակության մեծությունը պայմանավորված է հաղորդակցի առկայությամբ և ՀԳԱ հասցեականությամբ: Այսպես, այն բա-

ցականչությունները, որոնք ինքնաբույս հուզական վիճակ են արտահայտում, հիմնականում բնաձայնական կամ հնչյունական կազմով դրանց շատ մոտ բառեր են, ասենք՝ *ա՛հ/խ, վա՛հ/խ/յ, պա/հ/, հո oh/խ/յ* և այլն: Թերևս գիտակցվածության հաջորդ ստորին աստիճանին են կանգնած միավանկ կամ երկվանկ այն բառերը, որոնք վախ, զարմանք, անակնկալ, ուրախություն են արտահայտում: Օրինակ՝ *վայ, ամա՛ն, ջա՛ն, հրեշտա՛կըս, մա-մա՛, և* այլն: Հուզականության բարձր աստիճան կարող են արտահայտել նաև նշված երկու տիպի բառերով կազմված արտահայտությունները՝ *վայ ամա՛ն, ախ մամա ջա՛ն* և այլն: Գիտակցվածության և ռեֆլեքսիվ վերահսկում առավել բարձր աստիճան կա *այ քեզ բան՝/գոյական, ի՛նչ+գոյական կամ ածական, What a...! How...!* տիպի ՀԳԱ-ներում: Հետևաբար, դրանցում մեծանում է առարկայական վերաբերությունը, իսկ դրանց խոսքիմասային պատկանելությունը ձայնարկություններից կարող է անցնել դեպի եղանակավորող բառերի դասը: Եթե նկատի ունենանք, որ, այսպես կոչված, խառը կատեգորիաները բնորոշ են մարդկային ձանաչողության բացարձակապես բոլոր ոլորտներին, ապա միանգամայն բացատրելի է լեզվի և խոսքի տիրույթում դրանց ամփայությունը ևս:

Հաղորդակցական իրադրության կամ թեմայի և նյութի նկատմամբ արդեն հուզա-գնահատողական վերաբերմունքի արտահայտություններ աչքի են ընկնում իրենց թե՛ իմաստային դաշտի ընդարձակությամբ և թե՛ բազմազանվում են կառուցվածքային և գործաբանական տեսակետից: Սուբյեկտիվ հուզականությունը՝ լծորդված գիտակցվածության տարբեր աստիճանների, մակարդակների և լեզվառձական հնարավորությունների հետ, կարող է խոսույթային

հորիզոնում ծավալել լեզվախոսքային գնահատականների այնպիսի մի ծիածան, որ դրանցից յուրաքանչյուրի բնութագիրը միանշանակորեն տալը կդառնա գործնականում անհնար: Իսկ տեսականորեն ցանկացած ՀԳԱ հատկանիշների ամբողջությունը կախված է խոսույթային իրադրականության այն չափանիշներից, որ ունակ է վերլուծելու և արտածելու մեկնության արվեստը գերազանցապես տիրապետող տեսաբանի միտքը:

ՀԳԱ կազմության բարդությունը համապատասխանում է դրանց արտահայտած հուզական, գնահատողական և կոչական բովանդակության բարդությանը: ՀԳԱ գիտակցականության աստիճանի աճմանը զուգընթաց ծավալվում և բարդանում է ՀԳԱ կառուցվածքային բնութագիրը: Գնահատողական վերաբերմունքի արտահայտման համար գործի են դրվում ավելի բարձր մակարդակի լեզվատրամաբանական միավորներ, քան հուզական բացականչություններն են: Գնահատողական բաղադրիչի գերակշռությամբ ՀԳԱ կազմում հայտնվում են վերացական գոյականներ, հարստանում է այդ արտահայտությունների խոսքիմասային ցանկապնակը, գործի են դրվում արժեքային և գեղագիտական իմաստներ արտահայտող չափազանցություններ, փոխաբերություններ և այլ լեզվառձական միջոցներ:

Այսպիսով՝ ձանաչողական և հաղորդակցական առումներով հուզագնահատողական արտահայտությունները կարելի է դասակարգել.

1. ըստ գիտակցվածության աստիճանի՝

- ա) ինքնաբերական-անգիտակից ձայնարկություններ,
- բ) կիսագիտակցված - կամ, և/կամ,
- գ) գնահատողական - եղանակավորող արտահայտություններ,

2. ըստ հասցեագրման՝

- ա) ինքնաբերական սեփական վիճակի արտահայտում,
- բ) հույզի գիտակցված արտահայտում/գնահատական հաղորդակցական իրադրության նկատմամբ,
- գ) հուզագնահատողական վերաբերմունք իրական կամ պայմանական խոսակցի նկատմամբ. կոչականներ, դիմելաձևեր, հռետորական կոչականներ,
- դ) հուզագնահատողական վերաբերմունք տրվող կամ ստացված տեղեկության, հաղորդման թեմայի կամ նյութի վերաբերյալ,

3. ըստ հաղորդվող նյութի նկատմամբ արժեքային վերաբերմունքի՝

- ա) դրական՝ գոհությունից մինչև ցնծություն,
- բ) բացասական՝ վախից մինչև գայրույթ և կատաղություն,
- գ) չդասակարգված կամ անորոշ՝ զարմանք, վախ, տարակուսանք, անգիտություն և այլն,

4. ըստ կիրառման հաճախականության և լեզվակիրների գիտակցության մեջ ամրակայման աստիճանի՝

- ա) դիպվածային,
- բ) լեզվակիրների որոշակի շերտին բնորոշ և հանրալեզվական որոշ գործոններով սահմանափակված՝ բարբառային կամ ժարգոնային,
- գ) տվյալ լեզվամշակույթին հատուկ: Այսպիսով՝ ՀԳԱ զուգադրական քննության համար կարող են հիմք ծառայել վերը բերված գործոնները: Դրանք բխում են լեզվի ճանաչողական և հաղորդակցական գործառնություններից, ինչպես նաև մշակութային անփոփոխակ կարգերից: Ընդհանրացնելով հարցի

լուսաբանման բոլոր գիտական ներդրումները՝ կարելի է եզրակացնել, որ.

- ա) ձայնարկություններն ունեն բառային իմաստ, որը նրանցում մարդու զգացական ու կամային վերաբերմունքների գիտակցումն է տվյալ լեզվով խոսող հասարակության կողմից, այսինքն՝ դեմոտատիվ նշանակություն,
 - բ) իրենց վերաբերմունքային բովանդակությունը ձայնարկությունները արտահայտում են հնչերանգի միջոցով և շեշտով,
 - գ) ձայնարկությունների հնչերանգը զուգակցվում է նաև արտալեզվական արտահայտչամիջոցներով,
 - դ) կոչական կամ հարցուպատասխանային ձայնարկությունները ունեն գիտակցված հաղորդակցման որոշակի աստիճան և իրականացնում են դրդելու կամ ուշադրություն գրավելու գործառնություն,
 - ե) ձայնարկությունները զուրկ են բառակազմական և բառաթեքական առանձնահատկություններից և մեծ մասամբ կրկնավորներ են.
 - Ի տարբերություն սրանց՝ բարդ հուզագնահատողական արտահայտությունները ենթակա են թեքման, հոլովման՝ դրանով իսկ արտացոլելով լեզվական գիտակցության կարգայնացման աստիճանը:
- Ինչևէ, ՀԳԱ կարելի է դասակարգել ըստ վերը նշված հատկանիշների, որոնցից մեկն ունի ճանաչողական, իսկ երկուսը՝ հաղորդակցական նշանակություն: Համապատասխանաբար, այս դասերից յուրաքանչյուրն ունի իր կարգերը, որոնք էլ կարող են դառնալ ՀԳԱ միջլեզվական համեմատության հիմք:

Հոդվածի ներկայացման տարեթիվը՝ 16.05.2014

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բարսեղյան Հ., Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, ԵՊՀ հրատ, 1980, 528 էջ:
2. Զահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 362:
3. Ameka F. “Interjections: The universal yet neglected part of speech”, Journal of pragmatics 18, 1992, 101–118.
4. Crystal D. Phonaesthetically speaking. English Today 42, 1995, p. 8–12.
5. Goffman E. Forms of Talk, Philadelphia: University of Pennsylvania Press, 1981, p. 124–157.
6. Jackendoff R.S. Semantic Structures. Cambridge MA: MIT Press 1990.
7. Wierzbicka A. The semantics of interjection. Journal of Pragmatics 18/2. 159–192.

КОГНИТИВНЫЕ И КОММУНИКАТИВНЫЕ ОСОБЕННОСТИ ЭМОЦИОНАЛЬНО–ОЦЕНОЧНЫХ ВЫСКАЗЫВАНИЙ

ԳՕԱՐ ԳՐԻԳՐՅԱՆ

*Национальная Академия Наук РА,
Международный Научно–Образовательный Центр,
главный специалист учебной части
преподаватель английского языка*

Статья посвящена проблеме коммуникативных и когнитивных характеристик эмоционально–оценочных высказываний. Проблема состоит в том, что принятое в классической грамматике понятие “междометие” в некоторых теориях о частях речи представлено упрощенно, в результате чего изначально определенные как высказывания междометия потеряли свое коммуникативное значение и описываются только в когнитивном плане. Данная статья является попыткой переосмысления проблемы в рамках современных когнитивных теорий и теории коммуникации.

COGNITIVE AND COMMUNICATIVE PECULIARITIES OF EMOTIONAL–ATTITUDINAL EXPRESSIONS

GOHAR GRIGORYAN

*The National Academy of Sciences of the Republic of Armenia
International Scientific–Educational Center, Chief specialist of the educational department,
Lecturer of English,*

The article comprises an analytical insight into the problem of cognitive and communicative features emotional–attitudinal expressions. The underlying problem is related with the need of “rehabilitation” of the communicative value of Interjections in some grammatical theories where they are represented as lexical units rather than communicative ones. This distorted interpretation of classical approach to interjections creates irrelevance in comparative studies. An attempt is made to bring in clarity of definition and a revision of paradigmatic features from the perspective of contemporary cognitive and communicative theories.